

—Հիւսիսային բեւեռը բաղձալի միջապայ մը չէ ժամագործներու համար։ միանակ հոս է որ այս արհեստը չանցնիր, ժամացոյց չգործածուիր այս տեղը։

Բեւեռը բոլոր միջօրէականներու հաւաքման տեղն է։ այնպէս իր միեւնոյն ժամանակ ժամը թէ տասներկուքն է և թէ վեցն։

Դարձեալ, մի միայն մէկ ուղղութեանը կարելի է ճամբորդել, ինչ ճամբորդ որ երթանք, միշտ դէպի հարաւ կ'ուղղուին ձեր քայլերը, արեւելք կամ արեւմուտք չկայ։

—Սուէգի ջրանցքին երկայնութիւնը 100 մղոն է, իսկ խորութիւնը 36 ոտք։

—Լոնտոնի տուններուն թիւն է 600000։

—Երկրաշարժերու կարեւոր ցանկ մը վերջերս հրատարակուեցաւ, որ կ'սկսի 596 էն (ն. Ք.) մինչեւ 1887 թուական։

Այս երկար ժամանակամիջոցին մէջ, 2,400 դէպքեր պատահած են, 560 տարբեր տեղեր և որք կը բաժնուին հետեւեալ կերպով։

710 անգամ Չինաստանի մէջ, 549 արեւելեան Արաբիոյ մէջ, 36 արեւմտեան Արաբիոյ մէջ, 590 Գոլկանի մէջ, 202 կեդրոնական Ասիոյ մէջ, 21 Բոքսի Ասիոյ և հիւսիսային Պարսկաստանի մէջ և 188 եւրոպական Ռուսիոյ մէջ։

—Ամերիկայի ձօնձիւր նահանգին մէջ, Մաքսի մօտ ընտանիք մը կայ, որ 50 տարիէ ի վեր մահուան այցելութիւնը ընդունած չէ։ Ընտանիքին գլխաւորը 73, իսկ իւր կինը 72 տարեկան են։

Վերջերս ոսկիի ամուսնութիւններն (ամուսնութեան յիսնամեակը) կատարեցին իրենց 10 որդւոց և 22 թոռներէն 21ին ներկայութեանը։

—Մենէ շատեր նամակի մը թուականը, փոխանակ ամբողջ գրելու միայն 96 կը գրեն։ իսկ ի՞նչ պիտի ընեն առկէց չորս տարի վերջը 1900ին. շատ պարզ բան մը, միայն վերջի երկու գերօնները ուղարկութեան պիտի առնուին սապէս 00։

—Ուէնդ միսսիոն արքայարանը ցարդ 1373 անմահներու բնակարանը եղած է։

ԱՐՇԱԿ

ԹԱՂԱՅԻՆ ՁԱՅՆԵՐ

Պաշտէն խորագրութեան հասած նամակ մը կըսէ թէ, տեղւոյն Թաղական խորհրդայ պաշտօնավարութեան շրջանը լրացած է և սակայն նոյն խորհուրդը տակաւին տրամադիր չերեւիր իր հրաժարականը տալու, որպէս զի նորոգ ընտրութեամբ արժանաւոր յաջողութիւններ գտն իրենց տեղ է ալ վերջ տրուին կարգ մը ամուլ վէճերու և հակառակութեանց, որոնք թաղային վարժարանը արդի տրախուր ու անկերպարան միժակին հասուցին։

Նամակագիրը կը յաւելու նաեւ թէ, յիշեալ Թաղ. խորհուրդը տակաւին փորձ մ'անգամ չըրաւ Ստամբուլում թաղային վարժարանը բանալու, հակառակ կրթական Տեսչին կրկնակի ազդարարութեանց, թէ և ասիկ ամիս ու կէս առաջ բանալու վերջնական խոստում մը տուած էր, թաղեցիկը ստիպմանց չի կրնալով դիմադրել։

Ազգային իշխանութեան ուղարկութիւնը կը հրաւիրենք սոյն արդարացի դիտողութեան վրայ։

Ստամբուլայէն ալ խորագրութեան նամակ մը հասած է, որով կը բողոքեն Ընտրողական Ժողովը զատապարտելի անհոգութեան դէմ, որ պատճառ եղած է արդի տարաւ և անորոշ կացութեան։ Նամակագիրը կըսէ թէ, նորընտիր Թաղ. խորհուրդը ամբողջութեամբ հրաժարիլը սխալ է, թէ անոնցմէ վեցը երկրորդ հրաւերին պատասխանած է արդէն։

Եթէ ճշմարիտ է այս, պէտք է նորընտիր խորհրդականները կանչուել ձեռքնհաս իշխանութեան կողմանէ և զանոնք իրենց պաշտօնին գլուխը անցնելու համար կատարուին ինչ որ հարկ և պատշաճ է։

ԽՐՏՈՒԼԱԿԸ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Քրիթիլտ որը մնացած էր ութը տարեկան հասակին մէջ։ Իւր հայրն ու մայրը իրարու ետեւէ մեռած էին ու ինք հիւրընկալուած էր իւր մեծ մօրմէն, որուն հետ կը բնակէր Բարիզէն հեռու, ամբողջութեամբ զուրս, պզտիկ տան մը երրորդ յարկը, ուր զիրար կը միմիկաւ ընդունէին, սիրոյ և բարեկամութեան միեւնոյն խանդով միացած։

Մայր Շովին, ինչպէս կը կոչէին զայն թաղին մէջ, քիչ մը ստացուածք ունէր, գրեթէ տասն երկու հազար ֆրանքի դրամադուլս մը, զոր Իւնիոն Ժէնէնալ ընկերութեան դրամատունը յանձնած էր և որ իւր օժիտ պիտի ծառայէր Քրիթիլտի, երբոր ամուսնութեան տարիքին հասնէր։

Առաւօտ ըլլալուն պէս Քրիթիլտ յանձնարարութիւններ ընելու կ'ելլէր, օրուան ամբողջ պէտք եղածը կը գնէր և կը պատրաստէր. յետոյ, երբ ամէն բան կարգին էր, պարզ արդուգործէ մը վերջ կ'երթար նստելու պատուհանին մօտիկ, ուր կ'աշխատէր իր ծերուկ հանին դիմաց։

Մի քանի տարիներ անցան այսպէս։ Քրիթիլտ, այլ և սպասակաւ, յաջողեցաւ դերձակուհի մը ըլլալու և սորմիլ չըլլազգեստներ չիւնելու արուեստը, եւ սկսաւ օրական քսան եւ հինգ սուշա-հիլ այդ աշխատանոցին մէջ։ Միայն թէ տան գործերն ալ ինք կատարէր։ Ըստիպուած ըլլալով, ամառը ժամը հինգին կ'ելնէր անկողնէն, իսկ ձմեռը վեցին, և որովհետեւ իրենց հին սովորութեան համաձայն իւր մեծ մօրը հետ կը պատկեր, Քրիթիլտ խիստ զգուշութիւններ ձեռք կ'առնէր չարթնցնելու համար զայն, որուն քունը հազիւ արշալուսին կը սկսէր։

Օր մը, ըստ սովորութեան, երբ իր կողմէն ժամը վեցին մօտ Քրիթիլտ տունը կը մտնէր, իւր մեծ մայրը հոն չը գտաւ։

Կարծեց որ յանձնարարութիւն մը ընեալու գացած էր և շուտով պիտի վերադառնար։ Սակայն բան մը զինքը չփոխեց. պզտիկ ճաշարահին մէջ, պատուհանին մօտ, իր գործիքներու կողովը գետնը ինկած էր. գգրոցը բացուած էր, դարակները տակն ու վրայ եղած էին եւ սենեակին մէջ ընդհանուր անկարգութիւն մը կը տիրէր։ Քրիթիլտ վախեցաւ և շուտով վար իջաւ տեղեկութիւն մը առնելու համար դռնապանուհիէն։

Մայր Սոնյ պահ մը բացակայ գտնուած էր, եւ իւր վերադարձին բան մը չէր տեսնու։ Քրիթիլտ գողգողալով, սրունքներուն ոյժը կտրած, վեր ելաւ։ Սկսեց, բայց իրիկունն ու գիշերը անցան, առանց իւր մեծ մայրը տեսնելու։ Առաւօտուն, անձկութեան դառն ժամերէ վերջ, վաղեց աշխատանոց իմացնելու համար թէ չը պիտի կրնար գալ աշխատելու այն օրը և պատմեց ինչ որ պատահած էր. գործապետուհիէն յորդորեց զայն որ երթայ ոստիկանութեան խնայ տալու։

Հէք աղջիկը արտասուալից աշերով ամէն կողմ, ամէն ոստիկանատուն վաղեց եւ նոյն իսկ դիակնարան գնաց, բայց լուր մը չի կրցաւ ստանալ։ Վերջապէս երրորդ օրը տեսաւ պատուհանէն իւր մեծ մայրը, զոր երկու մարդիկ բռնած տուն կը բերէին։

Մայր Շովին խնդեցեր էր... Փողոցին մէջ, Իւնիոն Ժէնէնալ ընկերութեան անակոթութեան լուր իմանալով, ծերուկը վար իջած էր լրագիր մը գնելու։ յետոյ իր հարստութեան մէկ անգամին փաճնալը տեսնելով, յանկարծ խեղճ կորսնցուցած էր, եւ վեր ելնելով իւր արժէքաւոր թուղթերն ու թանկագին առարկայները առած և ըստ բաղձին մեկնած էր տունէն։

Քրիթիլտ զայն տեսնելով, անոր բազկապ մէջ նետուեցաւ։

— Ո՛հ, մեծ մայր, մեծ մայր, ըսել է որ երբէք չէիր սիրեր թողդ, որ զայն լքեցիր, հեծկտաց։

Բարի ծերուկը չի պատասխանեց. միայն ժպտեցաւ անոր՝ տխմար եւ ապուշ դէմքով մը։

Քրիթիլտ արեւմտիտ աղջիկ մ'էր սակայն. թէպէտեւ սաստիկ վշտակեցաւ իւր մեծ մօր վիճակը տեսնելով, սակայն ինքզինքը բաւական զօրաւոր դգաց տակաւին գործելու։

— Մերիկ մեծ մայր, ըսաւ անոր երբոր հանդարտեցաւ, բնաւ հոգ մի ընէր, ըստ պզտիկ Քրիթիլտը շատ լաւ պիտի խնամէ զեզի։

Եւ դարձեալ նետուեցաւ անոր գիրքը արտասուելով և գգուելով զայն։ Ապահով էր որ դրացիները չը պիտի գնացնէին ինքզինքն իր մօտը, և անոր Երբէն ինք յանձնառու էր միշտ անոր ծառայելու։ Նոյն իսկ յանձնառու կանչուած բժիշկը ծանր և արտաքոյ կարգի կարծեալ չէր գրեւ. գրեթէ միշտ հանդարտեցուցիչ բուսածիւրեր կը յանձնարարէր։

Բայց Քրիթիլտ չը պիտի կրնար հիմակ աշխատանոց երթալ, օրական քանի մը սու շահելու։

Բարեբաղդաւոր գործապետուհիին թոյլտուութիւն ըրաւ անոր, եւ այն օրէն Քրիթիլտ իւր գործերը տուն փոխադրեց։ Երջանիկ էր, իւր դժբաղդութեան մէջ իսկ երջանիկ, կարելով չըրմեծ մայրը, որ հիմակ բոլորովին անգործութեան դատապարտուած էր, երբեմն թիկնաթոռի մը վրայ նստած եւ երբեմն ալ բազմոցին վրայ պսակած, իր խորովեալ եւ ապուշ դէմքով ժպտելով իւր թոռան և անոր փոխաշխան խնամքները դիտելով։

Դեռեւ զօրծաւորուհին իր բոլոր գործութեամբ կ'աշխատէր, առանց հիւանդին ցաւերը աւելցնելու. վասն զի երթալով դիւրագոյած եղած էր ան եւ ամենափոքր պատճառ մը կը բաւէր զայն վախցնելու եւ լացնելու։

Միշտ Քրիթիլտը կը փնտէր և կը փափաքէր որ նա իւր ըստ, իւր անկողնոյն մէջ ըլլար միշտ։ Այսպէս Քրիթիլտ պարտաւորուած ըլլալով միշտ իւր մեծ մօր ըով մնալու, շատ անգամ իւր գործերէն ետ կը մնար. գիշերները չէր կրնար աշխատել իսկ առտունները աւելի զէ՛ն էր. մայր Շովին բնաւ չ'էր ուզեր որ Քրիթիլտ իւր ըովէն ելնէր. երբ ըզգար թէ ըստ չէր ան, իւր դողերը եւ զլխու ցաւերը իր սկսէին խկոյն։

Քրիթիլտ, ալ բոլորովին ճարահատ, լաւ գաղափար մը յղացաւ. պատկելէ առաջ պիտի հագուեցնէր խրտուելակը իւր հագած գգեստներով, և առաւօտուն անկողնի մը դուրս պիտի սահէր անկողնէն ու իր տեղը պիտի դնէր խրտուելակը, որուն ներկայութիւնը պիտի ոգեւորէր ինքզինքն։

Շնորհիւ իւր այս անմեղ հնարքին, Քրիթիլտ կարողացաւ աւելի երկարօրէն հսկել և աւելի կանուխէն աշխատութեան սկսելու և ասիկ օգուտ քաղեց իւր գործունէութիւնը կրկնապատկելու, որովհետեւ օրական քսան եւ հինգ սուշ ալ ևս չէր բաւէր իւր մեծ մօր դեղերուն։

Իրիկուն մը Քրիթիլտ կ'աշխատէր լըմընցնելու չիփակ մը, զոր խոստացած էր հետեւեալ օրը առջի ժամուն յանձնել. յանկարծ հիւանդին կողմէն երկար հառաչանք մը լսելով գլուխը վեր առաւ. այս հառաչանքին յաջորդեցին խեղդուկ աղաղակներ և յետոյ պաղաւտակն կոչուած մը։

Քրիթիլտ դողաւ հարցուց. — Ի՞նչ ունիս, մեծ մայր։

Մայր Շովին կարծեալ չէր իմանար և կը շարունակէր իր հեծկտուքը. Քրիթիլտ ձգեց իր գործը, մօտեցաւ անկողնոյն, և երբ հիւանդին բարձին վըրայ կը ծռէր, տեսաւ մեծ մայրը որ դէպ իրեն կը քաշէր խրտուելակը, զայն այնչափ սեղմելով իր կողմէն վրայ, որ իւր շնչառութիւնը կ'ընդհատէր, մի եւ նոյն ատեն կ'աղաղակէր կցկուտը պարբերութիւններով, զորս կ'արտասանէր զառանցանք բռնածիւր մը պէս։

— Խօսէ՛ ինձ հետ, բայց խօսէ՛, Քրիթիլտ... Քրիթիլտ...։

Եւ վերջին անգամ մ'ալ չըթուեցներ խրտուելակին անշուշտ կտակին դըպ-

ցընելէ յետոյ, շնչառաւ ինկաւ անկողնոյն վրայ ջրածուրութեամբ մրմնջնալով։

— Մեռե՛ր է...։

Քրիթիլտ, որ այս տեսարանէն ահաբեկեալ, սենեակին մէջ անշարժ մընացած էր, մէկէն ինքզինքը գտնելով, առաւ խրտուելակը, նետեց սենեակին պարապութեան մէջ եւ բազուկները բանալով գրկեց իւր մեծ մայրը աղաղակելով։

— Ի՞նչ կ'ըսես, մեծ մայր...։ քու պզտիկ Քրիթիլտը չ'է մեռած, ողջ է. ահաաւիկի քու ըովը է, քեզ կը համբուրէ...։

Եւ աղջիկը, վերահաս վտանգի մը առաջը առնելու համար, վաղեց դռնապանուհիին որպէս զի բժիշկը կանչէ։

Բժիշկը եկաւ, ծեր կինը դեռ մնացած էր անկողնոյն վրայ մի և նոյն վիճակին մէջ, և բժիշկը անոր բազկերակները եւ կուրծքը քննելէ յետոյ. — Նուագուած մը ունեցեր է, ըսաւ։ — Վտանգաւոր է, հարցուց Քրիթիլտ դողահար։

— Ո՛չ, անցեր է, շարունակեց բըծիշկը, երբոր տեղեկացաւ դէպքին մասնաւորութեանց, կա՛մ բոլորովին պիտի սպաքինի և կա՛մ բոլորովին պիտի գէշանայ։ Ամեն բան այս գիշեր կրնայ յայտնի ըլլալ։

Շատ ծանր եղաւ այն գիշերը. հետեւեալ առաւօտուն երբ Քրիթիլտ բըծիշկին դուռը քարնելը իմացաւ, դէպ ի դուռը վաղելով։

— Տօ՛քթօս, տօ՛քթօս, ըսաւ զըւարթութեամբ, տեսէ՛ք մեծ մայրը կը խօսի...։ զիս կը ճանչնայ...։

Արդարեւ մայր Շովին կը խօսէր մտքի կատարեալ արթնութեամբ. յիմարի մը ապուշ կերպարանքը չուներ։

Առաջին անգամուան շարժում մը իր բնութիւնը փոխած էր և նոր շարժման մը ազդեցութեան տակ, իւր կարողութեանց կանոնաւորութիւնը վերահաստատուած էր։

խրտուելակը զայն բուժած էր...։

Թարգմ. ՀՄԱՅՆԱԿ

ՀՆՈԱԳՐԱԼՈՒՐԻ

Պեռլին.—Չին, Գերմանիոյ պիտի թոյլատրէ իւր ծովագնաց վրայ ածուխի մթերանոցի մը հաստատութիւնը։ Չինական բանակին վերականգնութեան պիտի մասնակցին հարկւր գերմանացի սպայք։ Բաւարալա.—Վէնէցուէլլացի (Հարաւային Ամերիկա) հրոսակներ սահմանադրուել անցնելով, անգլիական կիւպաս մօտանալու մէջ չ'ընդհատուին և անգլիական հպատակներուն, արիւնճուշտ կռիւներ տեղի ունեցան։

Տոնոմալ.—Վերջին երկրաշարժին պատճառած զոհերուն թիւը կը հասնի տասն հազարի։ Ոչ թէ մէկ, այլ մէկ քանի քաղաքներ կործանեցան բոլորովին։

Նիւ Եօք.—Պըրիտայէն (Միացեալ Նահանգք) կը հեռագրեն թէ, ծովահն-

— 10 —

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԵՂԻՆԱԿ

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅՐ ՈՒ ՏՂԱՅ

Սուչօ, անտարբեր մնաց։ —Կաղաքիմ հայրիկ, մտիկ ըրէ՛ք զիս, և ապա դատեցէ՛ք։ —Լա՛ւ, խօսէ՛, մտիկ կ'ընեմ։ —Ռուսմանիոյ մէջ երբ մայրս մեռաւ, ես փողոցը անտէրուել մնացի, առանց ծնողաց, առանց պատառ մը չոր հայելի և գրեթէ կիսամարդի. ո՛հ, հայր իմ. չես կրնար երեւակայել տաք տարուական տըղեկի մը համար որ աստիճան չարաբաղդ վիճակ մ'էր ասի. ահա այս վիճակիս մէջ Պ. Ռուսթէն ինչպատուեցան զիս որդեգրելով, գործավագութիւն հօր մը ամեն խնամքներովը խնամեց զիս...։ —Որ յետոյ լաւ փոխարինեցիր։ —Ո՛հ, մի կանխիր, հայր, թող որ չմնջուենեմ։

—Շարունակէ պարոն։

—Հինգ տարի գիշերօթիկ վարժարանի մը մէջ, նախնական ուսումնաւարտելէ վերջը, Յաջանի մէջ աղա Միքայէլ Գաւիթեանցի ըսով գրագործութիւն ընել սկսայ. գժբաղդաւոր տարի մը վերջը, աղա Միքայէլ մեռաւ՝ իւր հարեւորութիւնը՝ որ երկու միւլեոն ֆրանքի կը հասնէր, Պոլիս գտնուող եղբորը այրիին և երկու զաւակնաւոր կտակած էր, որուն մէջէն հարկի հազար ֆրանք ալ ինծի մաս հասած էր. աղա Ռուբենը կը տակաւարար կարգած ըլլալով, հայրագիրս պարտաւորեցաւ Պոլիս երթալով, ժառանգորդները Ռուսմանիա փոխադրել. Պոլիսը տեսնելու մեծ փափաք ունէի, ուստի աղաչեցի աղա Ռուբենին, որ զիս ալ միատեղ տանի, հաւանեցաւ և գործերը կարգի գնելէ յետոյ, Կալայէն ձամբայ ելանք։

Օհան՝ իբր թէ չունէր առնելու համար պատմութիւնը ընդհատեց և հայրը գնեւ սկսաւ, հասկնալով համար թէ ինչ տպագորութիւն ազդած էր իւր հօրը վրայ։

Մերունին խոհուռ և անտարբեր կը մնար միշտ։

—Մեր ձամբորդութեան երկրորդ գիշերը օդն արեւոելով ծովը պեկոծեցաւ. առաջին անգամն էր որ կը ձամբորդէի. տատանումները խորագին աղ-

դելով ինձ, ծովու հիւանդութենէ բըւռնուեցայ. գիշերը շոգեկեան կամօթալը ելայ քիչ մը օդ առնելու համար, և մինչեւ նախն ցուրը գտնուած բարձրաւանդակը հաղիւ ելած էի, ինքզինքն կորսնցուցնելով ինուաղեցայ, չեմ գիտեր որչափ ժամանակ նուազուն մնացի. երբ աչքս բացի, հայրագիրս բազկապ մէջ էի...։ ուղեց զիս խուցը փոխադրել, ուստի ձեռքէս բռնած զիս ոտքի կեցնելու համար երբ իրեն կը քաշէր, ստիպւի ալիք մը նաւը մէկ կողմն ծռելով, հաւասարակշռութիւնը կորցու և ծովը խնայով աներեւոյթ եղաւ...։

—Ինչո՞ւ համար անմիջապէս նախն մէջ գտնուողներուն եղեւութիւնը չիմացուցիր։

—Ձգացած բուռն այլայլութենէս, կրկին նուաղեցայ։

—Սուտ կը խօսիս։

—Կերթնում հայր իմ...։

—Սուտ կը խօսիս կըսեմ քեզ, որովհետեւ թէ՛ նուաղած ըլլայիր, զքեզ վերցնողները գիշեր ատեն անդ գտնուելուդ պատճառը պիտի հարցնէին. և դու ալ հարկաւ եղելութիւնը պիտի իմացնէիր։

—Ժիշդ այդպէս եղաւ, հայր իմ, առաւօտուն երբ զիս սթափեցուցին, խելութիւնը պատմեցի և ամբողջ նաւը խուզարկելէ վերջը ինձի հաւատացին։

—Էյ աղէկ, երբ շոգեկեան Պոլիս հասաւ, ինչո՞ւ համ

ներու երեք խումբ կազմուած է: Ծո- վասպատակներուն նպատակն է՝ Բուսա- յի սպասարարներուն օգնել:

Համաձայն — 20 յունիս (առ Նիւ Եօք Զեպոյ) Մարտիան կոմէճ՝ Բուսայի ա- պրտարարներուն պետը՝ Սպանիացիներ- րուն վրայ մեծ յաղթութիւն մը տարաւ: Հազարէ աւելի Սպանիացիք սպաննուե- ցան կամ վիրարկեցան:

ՄԱՍԻՍ. — Համաձայն կը հեռագ- րուի թէ, ժամանակն ունի (թիֆո) սա- տիկ կոտորած կ'ընէ Սպանիացի զօրաց մէջ: Վեց հազարէ աւելի հիւանդներ լեցուցած են բոլոր հիւանդանոցները: Պուսա Բեք. — Նախարարապետ Պ. Պանիկ, երեսփոխանական ժողովին մէջ արեւելեան քաղաքականութեան համար ըսաւ թէ, Հունգարական կառավարու- թիւնը և արտաքին գործոց նախարարը համակարծիք են թէ, պէտք է պահ- պանել Պաքստանի թերակղզին մէջ ի- րաց այժմեան վիճակը:

Ազգային լուրեր

Խառն ժողովոյ անուանած Առաջ- նորդական Տեղապահներէն հետեւեալ- ները իրենց պաշտօնատեղիներն հասած են:

Պրուսայի՝ Տ. Յովհաննէս Վ. Արա- րուան, Բարբերի՝ Տ. Յովհաննէս Վ. Տ. Յակոբեան, Պաքստանի՝ Տ. Վահան Վ. Յակոբեան, Տրապիզոնի՝ Տ. Յովսէփ Վ. Ալիազեան և Շապին Գարահիսարի՝ Տ. Աբրահամ Վ. Ռուբինեան:

Հետեւեալներն ալ իրենց հրամանա- գրներն ստացած են և ի մտոյ իրենց պաշտօնատեղիները պիտի երթան:

Պապական Տ. Մարտի Վ. Աբրա- համեան՝ որ պիտի ուղևորուի Ալթամա- րայ վանքէն, Բալուի՝ Տ. Ստեփան Վ. որ պիտի ուղևորուի Կոտեց անապատէն, Գէօթանայի՝ Տ. Միքայիլ Վ. Աղանու- ին, որ պիտի ուղևորուի Իգլուխէն, Եւդո- կիայի՝ Տ. Յովհաննէս Վ. Նուրիկեան, որ պիտի ուղևորուի Պոլսէն, Երզնկայի՝ Տ. Յուսէփ Վ. Եսմէրեան, որ պիտի ու- ղևորուի Պոլսէն և Ամասիայի՝ Տ. Նիկո- լոս Վ. Ֆրանկիւսեան, որ արդէն Ա- մասիա կը դառնուի: Իսկ Երեսիոյ Առաջ- փոխանորդ Տ. Անանիա վարդապետ Հա- րարապետեան արդէն ճամբայ ելած է:

Զորքաւոր Ս. Ս. Նուրիկեան Մ. Վ. Գուրգենի մայրաքաղաք եկաւ, քանի մը որ կենալու համար:

Գոհութեամբ կը տեսնենք թէ Հայ- րենիք օրաթերքը՝ որ վեց ամիսներէ հե- տէ խալիվանման դատապարտուած էր, սկսաւ հրատարակուիլ երկուշաբթի օրէն ի վեր:

Մեր յարգոյ պաշտօնակցին, որ այն- քան մեծ ժողովրդականութիւն մը ստա- ցած է, յաջողութիւն կը մաղթենք:

Յառաջիկայ կիրակէ՛ (յունիս 16) Պոյաճը գիւղի Ս. Երեմ Մանկանց եկեղեցւոյ տոնադարձը լինելով, ի

խնդրոյ ժողովրդեան և հրաւիրանաց Պատ. Թաղ. Խորհրդոյ, հանդերձ- եալ է հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանել Ղալաթիոյ քարոզիչ Գեր. Տ. Երեմի Մ. վարդապետ Գալիպոլեան, ի հոգեւոր միաբնա- րութիւն բարեպաշտ հաւատացեցոց:

Երկուշաբթի օր, ի Կէտիկ-Բաշա, Գալիպոլեաներու ընկալարանին մէջ, տե- ղի ունեցաւ փաստաւոր Յարութիւն է- ֆէնտի Գալիպոլեանի պատկառութիւնն ընդ Օր. Նուարի, դուստր պատուա- ւոր ազգայիններէն Տիգրան էֆ. Թալ- լանճեանի, կնքահայրութեամբ Մարիկի նախկին հրատարակիչ Գրիգոր էֆ. Գալ- սէրեանի:

Հանդէսը օրհնութիւն պարգևութեամբ մը կառավարեցաւ նախագահութեամբ Եր. Թալաթի քարոզիչ Ներսէս Մ. Վ. Խա- լապետեան:

Գալիպոլեանք Արեւելեան Միջին Եւրոպէի խմբագրին հարսին՝ տի- կին Մարի Մամուրեանի մահը:

Հանգուցեալն, որ մեր հայ իգական սեռին մէջ կարեւոր դերք մը գրաւած էր, գրագէտ էր և Իգլորեան հանդէսին մէջ լուրջ և գեղեցիկ յօդուածներ կը գրէր Խումա ծածկանուամբ:

Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտ- նենք Արեւելեան Մամուլ պատկառելի խմբագրին և անոր սգակիր որդւոյն, Հրանտ էֆէնտի:

Ի ՆՊԱՍՏ ԳԱՆԱՌԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱՅ

Վաղամեակի Յակոբիկա՝ իւր հոգեվար- քի ժամուռ, յանձնարարեց որ իւր ու- նեցած գոյնն եւ իրեղէնք, ինչպէս նաև զպրոցական դասագրքեանց համեստ թանգարանը նուիրուի ուսանողաց:

Իւր կտակալատար քաղաքը հայրը՝ արդէն մասամբ վաղուց կատարած ըլ- լալով եղած յանձնարարութիւնը, իւր դասագրքոց մնացեալ մասը (30 կոոր) այժմ կը նուիրէ հայրանակ դասառաց կարտ դպրոցականաց:

Ոյն նուէրը՝ թէ՛նք զգացմանց ըով չնչին, սակայն սա վերին սիրտիմքը պիտի ընծաւէ ինձ թէ, ամէն անոնք՝ որք պիտի ընթերցեն զայն, պիտի յի- չեն դաւալու, և ինձ համար վստա- հած պիտի ըլլան անոր յիշատակը, ի- րենց ծաղիկ տնոցը մէջ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԷԺ

Զորքաւոր Ս. Երեմ ունեցաւ Ռո- պերթ Գոլէժի վեց չորսնասարտե- րուն վկայագրի բաշխման հանդէսը, որուն կը նախագահէր Միացեալ Նա- հանգաց դեսպանական գործակա- տար մըսթըր Բիւրը. ներկայ էին նաեւ, ի մէջ բաշխման նշանաւոր անձանց, Հայոց, Յունաց Պատրիար- քական փոխանորդներն, Պուլկարաց Եկեղեցին փոխանորդն և Բողոքա- կան Հայոց աղագապետ Յակոբ էֆէն- տի Պոյաճեան:

- Լաւ խորհէ, վերջը պիտի գլխաւ:
- Երբէ՛ք...
- Այն տանն մեզքը ճիտը:
- Այն տանն ինչ պիտի ըլլայ, հար- ցուց հեգծորէն, բայց իրապէս անորոշ վախ մը զգալ սկսած էր...
- Այն տանն սա պիտի ըլլայ թէ, իսպա՛ռ... Երբեք, իսպառ ասկէ դուրս չը պիտի ելնես:
- Ուրեմն չէք գիտեր թէ կտակը պայմանաւոր ունի, և պայմանաւորման լրանալէ ետք թափ մնացած է, և թէ զին հոս երթելով, մեծը ամիս վեր- ջը ամեն ինչ կորած պիտի ըլլայ: Վեր- ջապէս եթէ եօթնամասուն տարի ալ զին հոս պահէք, դարձեալ չը պիտի գիտնաք ժառանգորդաց ուր դառնալը:
- Ինչո՞ւ համար չար ըլլալ կողմէս, ապաշորհ դաւալ, ուրիշներու գէշու- թիւն ընել ուղիւով ի՞նչ կը շահիս: Հա- ճատու խոսքիս, Օհան, ամենէն մեծ չա- հադիտութիւնը բարիք գործել գիտնալն է...
- Ընդունայն է, այդ քարոզները օ- գուտ մը չեն ըններ...
- Եթէ այդպէս յամառիս, Պ. Ռու- քէն պիտի ստիպուի ոստիկանութեան դիմել, որ պիտի պարտաւորի՝ Պ. Ռու- քէնը ծովը նետելով, սաանց Պոլսի կե- նալու: Այլքանտորիս ուղեւորելու պա- ճառները խոստովանել, կտակը որու

- ըովէ գողցած ըլլալը ըսել. ես չեմ ու- ղեր որ իմ անունն անուանարկուի, հա- ւըցա՞ր, պարոն:
- Ուրեմն թուր որ երթամ:
- Զիս մտիկ ըրէ, երէկ գիշեր չէի գիտեր թէ դու իմ դաւակա ես. երբ ա- զա Ռուքէնին պատմութեան իրողու- թեան վերահասու եղայ, ո՛հ, ամբօթն չիւրջի ըսել թէ ես եմ Սուշո Կիլբան: Պ. Ռուքէն առանց զին ճանչնալու երկու անգամ վեհաճանապարհ կհասցաւ փրկեց. և այս բարեկամը ինձ պատկերացաւ ըլլալով: Հակել մինչեւ այս գիշեր իւր վե- րադարձին. բայց վերադարձին համոզ- ուած եմ որ չպիտի կարենամ փրկել ըզ- քեմ. ես բաւականէն աւելի հարուստ եմ. այս վայրկեանիս իւր ճամբու ծախք քսան հազար ֆրանքի չէք մը պիտի տամ, անմիջապէս մեկնէ Պոլսէն, Եւրոպոյի քաղաքներէն մին քաղաք է անմիջապէս գտնուած տեղի: Գողցուր ինձ կայանա- կեցիկ նամակաւ մը, որուն հասցէն Ֆի- լիպ ճգնաւոր պէտք է ըլլայ: Ուր որ ալ ըլլաս ամիսը հինգ հազար ֆրանք պիտի ստանաս, և եթէ պատուաւոր եղանա- կաւ մարդ ըլլալ աշխատիս, կը հաւաս- տեմ ընդ թէ Միքայիլ Գալիպոլեանի կտակին հարստութեան կրկինը պիտի ունենաս:
- Օհան շուարած իւր հորը կը նայէր. ցնցոտիներ հագած ծերունի մը միջոն-

Հանդէսը սկսաւ ընտիր երաժըշ- տութեամբ մը:

Ապա չորսնասարտներէն Պ. Պալ- չէֆ բանախօսեց ուսու գրականու- թեան ներկայ վիճակին վրայ, իսկ Պ. Միքայիլ բանախօսեց ապագայ սերնդեան նկատմամբ մարդկութեան ունեցած պարտականութեանց վը- րայ:

Երկու բանախօսութիւններէն ետքը վերականգնութիւն երաժշտութիւնը, ուրկէ վերջը չորսնասարտներէն Պ. Լեւոն Չորիկեան խօսեցաւ, նիւթ ունենալով իրեն փոխադրութիւնը և գործնական կեանքը: Հայ պա- կաւորէն ետքն ալ Պ. Վասիլէֆ խօ- սեցաւ դրամագլխոյ և աշխատու- թեան ծանօթ խնդրոյն վրայ:

Այս կրկին բանախօսութեանց յաջորդեց երաժշտութիւնը և Տոք- թըր Վոլպերին ըսած մէկ աղօթքը, ուրկէ ետքը եկեղեցական երաժշտու- թեամբ մը աւարտեցաւ հանդէսը:

Այս տարուան չորսնասարտե- րուն անուններն են.

Պ. Նիքոլա Սնիշիւտեան Յոյն Պուլկար Պ. Ժօրժ Պայէչֆ Ռուս Պ. Լեւոն Չորիկեան Հայ Պ. Մարթիկ Վասիլէֆ Պուլկար Պ. Լեւոն Եաղըճեան Հայ

Այս պատկաւորներէն Պ. Նիքոլա Անթոնիատեան հազարէ աւելի հան- դիսականաց ուղարկութիւնը գրա- ւեց իր քնարահարութեան մէջ դու- նեցած տաղանդով:

Ռօպերթ Գոլէժ հայ կրթութեան մէջ մեծ տեղ մը բռնած է. կը մտը- թիւնը որ այդ դիրքն յաւէտ մնայ իրեն:

Ներքին լուրեր

Շաքիր բաւա. — Անատոլի նահան- ցաց ընդհանուր քննիչ Շաքիր բաշան վերջերս Երզնկայէն ճամբայ ելել է Սը- վաք երթալու համար:

Վիքորախ քաղաքին. — Շաքաթ, Անաթոլի թագուհւոյն գահակալութեան 59րդ տարեդարձն ըլլալով, դեսպանա- տան մէջ ընդունելութիւնը կատարուե- ցան:

Տեղիք բաւա. — Բուսիլի արտա- սովոր հրամանատար և կայս. աւագ թիկնապահ Տէրվիլ բաշա, որ ժամանկէ մէ մը ի վեր հիւանդ էր, շարաթ երկոյ մեռաւ: Հանգուցեալը 90 տարեկան էր: Անիկ Լուրմի բաւա. — Սալափ Կը- սէ թէ Հայկալի զօրաց հրամանատարը, յատուկ պաշտօնով Ա. յնթապ գտնուէ, Լի. — Հուկի — Չալի — Զորաց կայ որ Զինացի պետական մարզը Բէյթալի ար- ուեստահանդէսն այցելել է ետքը՝ մայ- րաքաղաք ալ պիտի այցելէ:

Քոլեա. — Երեսիոյ մէջ այս համա- ճարակը հետզհետէ կը սաստկանայ, մի- անջ շարունակ կը շարունակուի:

այն շարաթ օրը այլեւայլ տեղեր 250 մահ պատահէր:

Զինուորական բժշկական կայս. վար- փարանի այս տարուայ միակ հայ չորսնա- ւարտն է Տոքթ. Բենիմարի էֆէնտի Երզնկայէն, որ իւր աւարտական քըն- նութիւններն յաջողութեամբ տալով, ստացած է Տոքթորութեան վկայագրի և հարկաւորութիւն աստիճան: Իւր նախ- նական ուսումները Իւսկիւտարի ճեմա- րան-վարժարանին մէջ ըրած և միջնա- կարգ ուսումը ստացած է ի Գուլէլի զի- նուորական Խոտալի վարժարանին մէջ:

Սարսկա. — Այս տարի Կէլիպոլիսի մէջ և չորսնասարտ մեծ քանակութեամբ այս ծովէն որացողներով, իւրաքանչիւր քիւն մինչեւ 47 փարալի ծախուէր է:

Ձերակալութիւն. — Էնկիւրիի նահան- քին մէջ Սիլիւրի Հիսարի կողմերը սապա- տակող Գէլ Օսման անուն աւագակը ձեր- ակալուէր է:

Հունճներ. — Մաշիկայէն կը գրեն թէ, այս տարի հունճերը առատ ըլ- լալ կը ցուցնեն:

Հրդեհ. — Կիւրակի գիշեր Փընտըզլի- ճարուն վրայ գտնուած Խոտէ մը ընդ- դէժ ծագելով ինը խանութներ և երկու տունքը այրեցան:

Ոճիւր. — Պաշարիլի կողմը Սարգիս և Սալափն անուն երկու անձերու դիակ- ներ գտնուեցան, Այս երկու անձինք նախ խեղդամահ եղած էին և ապա ծո- վը նետուած:

Նալովալի դէպք. — Իգսամէն կ'իմա- նամը թէ Տիկիի Պրանզոն և Օր. Բա- րաղամեան ընդ տանող աւագակներէն Պարապ Նիքոլա ձերակալուէր է անց- եալ ուրբաթ օր:

Յիշեալ աւագակը նոյն օրը փարալի մը մօտ ժուռ եկած ատեն, քանի մը հո- վիւնէր կապած ելով իմաց տուէր են ոս- տիկան գինուորաց, որք անմիջապէս ձերակալեւ են: Օճիլը ձեռք տուող այս անտառի ագնեակներն վրայէն 700 ոսկիւր չափ դուռու մը գտնուէր է:

Մահու պատիւ. — Ուրագաւ տեսնող մահուան դատաւարած էր ընկի Պրու- սայի Չէնկիլիք գեղացի և Իւսկիւտարի մէջ ապրող զանաւորներն ընդ Ռօֆին օլլու Գարեգինն, որ ամբաստանուած էր թէ կանխամատուցութեամբ սպաննած է Մաքսային վերահսկողութեան Ա. յնի- յի ապրողներուն արդակալի օգնական Եօղադուրի Սինեքերմ էֆէնտին և ոս- տիկան գինուորաց տանապետ Սիլէ յ- մանն ալ սպաննելու դիտարկութեամբ վիրաւորած է:

Վճարակ ատենի պատժական ճիւղն ալ վաւերացուցած էր այդ վիճքը:

Զորքաւոր Ս. Երեմ, ժամ 8 1/2 ին, ի ներկայութեան Ոստիկանութեան նա- խարարութեան Մէթրուսի Ա. Սիլիւր Բա- ղու պէյի, ոստիկան գինուորաց պա- ճականներուն քննիչ Հիւսէյին Տաիմ պէյի, ոստիկանաց ժողովոյ նախագահ Հիւսէյին էֆէնտին և Դատական նա- խարարութեան կողմէ ալ վերաքննիչ ա- տենի ընդհանուր դատախազ ճէմալ-տ- տին պէյի, վերաքննիչ ատենի անդաւ- ներէն Հաճի Բէշտու էֆէնտին ու քա- րաւոր Ռիւսթմ էֆէնտին, օրինական հարկ եղած գործողութիւնը ամրոշու-

մին ի գործ դրուելէ և քահանայի մը մը միջոցաւ կրօնական արարողութիւնը կատարուելէ յետոյ, Գարեգին կախա- ղան հանուեցաւ Գարաքէյի կամուրջին Պոլսոյ կողմը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յունիս 15 թուականով Բարձր. Մեծ Եկարգութիւն ուղղեալ հեռագրեր ծանուցած են թէ Պրուսայի, Տրապի- զոնի, Մուսուլի, Պիլիսի, Տիարպէլի- րի, Գոնեաի, Սըվալի, Ատանայի, Հա- լէպի, Էնկիւրիի, Վանայ, Էրզուրմի, Խարբերի, Հայէպի և Տիարպէլիի նա- հանգներուն մէջ ալ, Հնորհու Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տրէ:

ՍԽՈՒՆ ԳԱԲԱՄԱՃԱՆ

Փն.Ջի.Կ. պատկերազարդ, նախա- պատրաստական տարի հայերէն արա- սանութեանց. Գին 3 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 5 դր. — Մասն Բ. — Բ. ապագրութիւն. պատկերազարդ, ճոխ պարունակութիւն:

Գին 7 1/2 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱՌՈՅ, մասն Ա. Գ. — ապա- ղութիւն, քարոյալից և հետաքրքրա- շարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով դարձրաւ և ճոխա- ցած շարադրութեանց նիւթերով:

Գին 7 դր. ԶԱՒԱՔԱՄԱ